

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏԵՐՄԻՆԱԼԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿՆՔԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

« » 20 .. թ

«Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը (իրավաբանական հասցե՝ ք. Երևան, 0010, Վ. Սարգսյան 2), այսուհետ՝ «Բրոքեր», ի դեմս -----, որը գործում է բանկի կանոնադրության հիման վրա, որի անունից ----- լիազորագրով հանդես է -----, մի կողմից, և -----, այսուհետ «Հաճախորդ», ի դեմս ----- մյուս կողմից, միասին անվանվելով «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1 Սույն համաձայնագրի իմաստով՝

- 1.1.1. Ոչ բավարար ծածկույթով գործարք՝ Համակարգի միջոցով Հաճախորդի կողմից կնքվող՝ Արժեթղթերի առքուվաճառքի գործարք, որի կնքման պահին Հաճախորդը չունի այդ գործարքով իր պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ գումարի դրամական միջոցներ կամ արժեթղթեր:
- 1.1.2. Ոչ բավարար ծածկույթով Վաճառքի գործարք՝ Ոչ բավարար ծածկույթով գործարք, որի առարկան Հաճախորդի կողմից Արժեթղթերի օտարումն է, և որի կնքման համար Հանձնարարականը Համակարգ մուտքագրելու պահին Հաճախորդի հաշվում առկա չեն այդ գործարքի կատարման/գործարքով Վերջնահաշվարկ իրականացնելու համար անհրաժեշտ քանակությամբ համապատասխան Արժեթղթեր:
- 1.1.3. Ոչ բավարար ծածկույթով Առքի գործարք՝ Ոչ բավարար ծածկույթով գործարք, որի առարկան Հաճախորդի կողմից Արժեթղթերի ձեռքբերումն է, և որի կնքման համար Հանձնարարականը Համակարգ մուտքագրելու պահին Հաճախորդի հաշվում առկա չեն այդ գործարքի կատարման/գործարքով Վերջնահաշվարկ իրականացնելու համար անհրաժեշտ գումարի դրամական միջոցներ:
- 1.1.4. Ծածկույթ՝ Համակարգի միջոցով Ոչ բավարար ծածկույթով գործարքների հնարավորության տրամադրման համար Հաճախորդին անհրաժեշտ միջոցների հասանելիության տրամադրում:
- 1.1.5. Նախապայմաններ՝ Ոչ բավարար ծածկույթով գործարքների կնքման նախապայմաններն են, մասնավորապես՝ դրանց կնքման կարգն ու պայմանները, Նախնական Մարժայի մեծությունը, Սահմանային Մարժայի մեծությունը, Տոկոսադրույքը և դրա հաշվարկման և վճարման կարգը, Ոչ բավարար ծածկույթով Վաճառքի գործարքների առարկա Արժեթղթերի սահմանափակվածությունը որոշակի Արժեթղթերով:
- 1.1.6. Հաճախորդի պարտավորությունը՝ Համակարգի միջոցով Ծառայությունների մատուցման արդյունքում առաջացած՝ Բրոքերի նկատմամբ Հաճախորդի պարտավորությունը՝ սույն համաձայնագրի, Պայմանագրի համաձայն:
- 1.1.7. Հաճախորդի դրամական պարտավորությունը՝ Հաճախորդի պարտավորությունները, որոնք ծագել են Առքի Ոչ բավարար ծածկույթով գործարքի արդյունքում:
- 1.1.8. Հաճախորդի պարտավորությունը Արժեթղթերով՝ Հաճախորդի պարտավորությունները, որոնք ծագել են Վաճառքի Ոչ բավարար ծածկույթով գործարքի արդյունքում:
- 1.1.9. Նախնական Մարժայի մեծություն՝ Հաճախորդի հաշվում Ոչ բավարար ծածկույթով գործարքի կնքման համար անհրաժեշտ նվազագույն գումար, որի առկայության դեպքում Համակարգը հնարավոր է դարձնում այդ գումարի կամ այդ գումարին Շուկայական գնով համապատասխանող քանակությամբ Արժեթղթերի և, համապատասխանաբար, գործարքով փոխանցման ենթակա գումարի կամ գործարքով փոխանցման ենթակա Արժեթղթերի ընդհանուր քանակի տարբերության ապահովումը և գործարքի կնքումը:
- 1.1.10. Սահմանային Մարժայի մեծություն՝ Հաճախորդի հաշվում Ոչ բավարար ծածկույթով գործարքի կնքումից հետո պահպանման ենթակա նվազագույն գումար, որի առկայությունը չապահովվելու դեպքում Համակարգը ավտոմատացված կերպով (առանց Հաճախորդին ծանուցելու) իրականացնում է Ոչ բավարար ծածկույթով գործարքին Հակադարձ Գործարք Շուկայական գնով, որի արդյունքում ստացված միջոցները ուղղվում են Բրոքերի նկատմամբ Հաճախորդի դրամական և արժեթղթերով պարտավորությունները մարելուն:

- 1.1.11. Շուկայական գին՝ տվյալ գործարքի կնքման ԱՀ-ում՝ տվյալ գործարքի առարկա Արժեթղթի՝ տվյալ պահին գրանցված վերջին առքուվաճառքի գինը:
- 1.1.12. Դիրքի փակում՝ Հաճախորդի կնքած գործարքների կնքման արդյունքում ստացված՝ Հաճախորդի Արժեթղթերի իրացում կամ վաճառված Արժեթղթերի ձեռքբերում Շուկայական գնով՝ Հակադարձ գործարքների կնքման միջոցով:
- 1.1.13. Հակադարձ Գործարք՝ Արժեթղթերի առքի դեպքում՝ ձեռք բերված Արժեթղթերին նույնական (միևնույն թողարկման, դասի և տեսակի) Արժեթղթերի վաճառք/օտարում, Արժեթղթերի վաճառքի դեպքում՝ օտարված Արժեթղթերին նույնական (միևնույն թողարկման, դասի և տեսակի) ձեռքբերում:
- 1.1.14. Օրական առևտուր՝ Արժեթղթերով գործարքի և դրան Հակադարձ գործարքի իրականացում Հաճախորդի կողմից տվյալ ԱՀ-ում միևնույն առևտրային նստաշրջանի ընթացքում:
- 1.1.15. Կայք՝ www.ameriabank.am դոմենի միջոցով հասանելի Բրոքերի ինտերնետային գլխավոր էջը (home page):
- 1.1.16. Համակարգ՝ արտասահմանյան Արժեթղթերի առքի և վաճառքի գործարքներ կնքելու հնարավորություն ընձեռող էլեկտրոնային (ցանցային, ինտերնետ) գործիք հանդիսացող, ,Ameria Global Trading-ը պայմանական անվանում կրող ծրագրային փաթեթ (ապահովում)՝ համապատասխան ինտերֆեյսով, որին հասանելիության ապահովումը սույն համաձայնագրով ծառայությունների մատուցման միջոցն է: Համակարգը ներառում է նաև Հաճախորդի անձնական կարգավորումների ինտերֆեյսը (account management), որի միջոցով Հաճախորդը հնարավորություն է ստանում ակտիվացնել/ապասկտիվացնել որոշակի Ծառայություններ, օգտագործել առևտրային համակարգի փորձարարական (demo) տարբերակը, տեսնել/ներբեռնել կատարված գործողությունների վերաբերյալ ամփոփագրերը/հաշվետվությունները:
- 1.1.17. Պայմանագիր՝ Բրոքերի և Հաճախորդի միջև _____-ին կնքված՝ Արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման (կոմիսիայի), բրոքերային հաշիվների սպասարկման N ____ պայմանագիրը, այդ թվում՝ դրա անբաժանելի մասը կազմող՝ ,Ամերիաբանկե ՓԲԸ Բրոքերային ծառայությունների մատուցման ընդհանուր պայմանները:
- 1.1.18. Պահառության պայմանագիր՝ _____-ին Բրոքերի և Հաճախորդի միջև կնքված՝ Պահառուական ծառայությունների մատուցման պայմանագիր:
- 1.1.19. Սույն համաձայնագրում մեծատառով օգտագործվող, սակայն սույն համաձայնագրի 1.1. կետում չսահմանված տերմինները/հասկացությունները կիրառվում են Պայմանագրում սահմանված իմաստով:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

- 2.1 Համակարգի միջոցով, մասնավորապես՝ Հաճախորդին տրամադրելով հասանելիություն Համակարգին՝ Բրոքերը հաճախորդին հնարավորություն է տալիս Արժեթղթերի արտասահմանյան կարգավորված և չկարգավորված շուկաներում, այդ թվում՝ առևտրային համակարգ-հարթակներում (սույն համաձայնագրում բոլորը միասին և առանձին՝ ԱՀ(ներ)) Արժեթղթերի և արտարժույթի առքուվաճառքի գործարքներ կնքել՝ սույն համաձայնագրին, Պայմանագրին և Պահառության պայմանագրին համաձայն՝ դրանցում սահմանված պայմաններով:
- 2.2 Սույն համաձայնագրով Բրոքերը Հաճախորդին վերջինիս կողմից ԱՀ-ներում Ոչ բավարար ծածկույթով գործարքների կնքման համար Ծածկույթի և արտարժույթի փոխարկման (կոնվերտացիա) իրականացնելու հնարավորության է տրամադրում՝ Համակարգի միջոցով՝ Համակարգին հասանելիություն տրամադրելով Հաճախորդին:
- 2.3 Սույն համաձայնագրով Բրոքերը Համակարգին հասանելիության տրամադրմամբ Հաճախորդին ընձեռում է տեղեկատվություն ստանալու հնարավորություն՝ ԱՀ-ներում գնանշումների, ինչպես նաև Արժեթղթերի գնագոյացման վրա ազդող հանգամանքների վերաբերյալ: Տեղեկատվական ծառայությունները ակտիվացվում/ապասկտիվացվում են Հաճախորդի կողմից ինքնուրույնաբար Համակարգի անձնական կարգավորումների ինտերֆեյսի (account management) միջոցով:
- 2.4 Հաճախորդը սույն համաձայնագրով և Պայմանագրով սահմանված կարգով վճարում է սույն համաձայնագրի 2.1 - 2.3 կետերում նշված ծառայությունների համար:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳ

- 3.1 Պայմանագրի 2.1.-2.3. կետերում նշված ծառայությունները Բրոքերը Հաճախորդին մատուցում է Համակարգին Հաճախորդի հասանելիությունը ապահովելու միջոցով: Համակարգը Հաճախորդին հնարավորություն է տալիս ինքնուրույնաբար ձևակերպել և Համակարգի միջնորդությամբ համապատասխան ԱՀ-ներում կատարման առաքել Արժեթղթերի առքուվաճառքի

հանձնարարականներ, ընդ որում Բրոքերը Համակարգին Հաճախորդի հասանելիությունը ապահովելու փաստի ուժով հանդիսանում է Հաճախորդի հանձնարարականները ի կատարում փոխանցելու պատասխանատու (բայց ոչ դրանք կատարելու ներդրումային ծառայություն մատուցող անձ):

- 3.2 Համակարգը հնարավորություն է ընձեռում Հաճախորդին Արժեթղթերի առքուվաճառքի հանձնարարականներ առաքել՝ որոշակի երկրների/տարածաշրջանների որոշակի ԱՀ-ներում գործարք կնքելու համար: Երկրները/տարածաշրջանները և ԱՀ-ները թվարկված են Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված սակագներում:
- 3.3 Սույն համաձայնագրի 2.1.-2.3 կետերում նշված ծառայությունները մատուցելու նպատակով Բրոքերը Հաճախորդին փակ ծրարով կամ էլեկտրոնային փոստով՝ Հաճախորդի՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեին ուղարկելով, տրամադրում է համապատասխան ծածկագիր՝ Համակարգ մուտք գործելու և այն շահագործելու համար: Ընդ որում թե՛ փակ ծրարով հանձնումը, թե՛ էլեկտրոնային փոստով ծածկագրի առաքումը համարվում են ծածկագրի պատշաճ հանձնում Հաճախորդին և Բրոքերը պատասխանատվություն չի կրում ծածկագիրը երրորդ անձանց հայտնի դառնալու հետևանքով Հաճախորդին պատճառված վնասի համար, եթե չի ապացուցվում, որ ծածկագրի հայտնի դառնալը երրորդ անձանց Բրոքերի դիտարկության անմիջական արդյունք է: Համակարգը Հաճախորդի կողմից օգտագործվում է ամբողջությամբ և բացառապես Հաճախորդի ռիսկով և պատասխանատվությամբ:
- 3.4 Սույն համաձայնագրի առարկա հանդիսացող ծառայությունների մատուցման՝ սույն համաձայնագրով չսահմանված պայմանները և չկարգավորված հարաբերությունները, ինչպես նաև Հաճախորդի Միջոցների հաշվառման պայմանները, բացառությամբ համաձայնագրի 3.6 կետով նախատեսված հաշվառման պայմանների, սահմանվում և կարգավորվում են Պայմանագրով և Պահառության պայմանագրով:
- 3.5 Սույն համաձայնագրի հիման վրա կնքվող Գործարքներով պարտավորությունների կատարման համար նախատեսված, ինչպես նաև այդ Գործարքների արդյունքում ստացվող դրամական միջոցների հաշվառման նպատակով Հաճախորդի համար բացվում է _____ USD Բրոքերային հաշիվը: Ըստ անհրաժեշտության, եթե Գործարքի արդյունքում Հաճախորդի նկատմամբ դրամային պարտավորությունը կատարվում է USD-ից բացի այլ արժույթով, Բրոքերը կբացի Հաճախորդի համար տվյալ արժույթով Բրոքերային հաշիվ, եթե տվյալ արժույթով հաշիվներ առհասարակ սպասարկվում են Բրոքերի կողմից: Հաճախորդը սույնով տալիս է Բրոքերին իր հանձնարարականը՝ սույն կետում նշված հաշիվները բացելու համար: Սույն կետում նշված Բրոքերային հաշիվների իրավական կարգավիճակը կարգավորվում է Պայմանագրով, և Պայմանագրի՝ Բրոքերային հաշիվներին վերաբերող դրույթները տարածվում են սույն կետում նշված հաշիվների վրա:
- 3.6 Եթե համապատասխան արժույթով հաշիվներ Բրոքերի կողմից չեն սպասարկվում, ապա Գործարքի արդյունքում ստացված Միջոցների հաշվառման նպատակով իրականացվում են արժույթային համարժեքների հաշվարկները՝ հիմք ընդունելով ԱՄՆ դոլարի և համապատասխան Գործարքի արժույթի այն փոխարժեքները, որոնք կիրառվում են համապատասխան Գործարքի կնքմանը մասնակցող Գործակալների կողմից:

4. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐԸ, ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 4.1 Համակարգը հնարավորություն է տալիս Հաճախորդին կնքել Ոչ բավարար ծածկույթով գործարքներ Նախապայմանները ապահովելու և դրանց համապատասխանելու դեպքում:
- 4.2 Հաճախորդը սույնով հայտարարում է, որ լիարժեքորեն հասկանում է Ոչ բավարար ծածկույթով գործարքների կնքման՝ սույն համաձայնագրով սահմանված Նախապայմանները, ինչպես նաև գիտակցում է սույն համաձայնագրի համաձայն Ոչ բավարար ծածկույթով գործարքների կնքման առանձնահատկությունները, Արժեթղթերի սովորական առքուվաճառքի (առանց Ոչ բավարար ծածկույթի) համեմատ առավել ռիսկի առկայության հանգամանքը, մասնավորապես կորստի դեպքում դրա մեծացումը՝ Հաճախորդի պարտավորությունների գոյացման փաստը հաշվի առնելով:
- 4.3 Հաճախորդը սույնով հավաստում է, որ լիովին և ամբողջությամբ հասկանում է Համակարգը, դրա շահագործման կանոնները, դրա բոլոր գործիքները, դրանով ներկայացվող տեղեկատվությունից օգտվելու և այն հիմք ընդունելով գործարքների կնքման ռիսկը, դրա միջոցով Արժեթղթերի առքուվաճառք իրականացնելու առանձնահատկությունները, դրանով Հանձնարարականների տեսակները, դրանց առանձնահատկությունները և դրանք Համակարգ մուտքագրելու տեխնիկան, առանձնահատկություններն ու հետևանքները:

- 4.4 Հաճախորդը սույնով հայտարարում և հավաստիացնում է, որ ընդունում և գիտակցում է, որ Համակարգի հնարավորություններն ու գործիքները չօգտագործելու կամ սխալ օգտագործելու, ինչպես նաև Համակարգում առկա տվյալները հիմք ընդունելով ներդրումային որոշումներ կայացնելու ռիսկը կրում է միայն ինքը և որ, հետևաբար, սույն համաձայնագրի համաձայն՝ Բրոքերը Հաճախորդի կողմից Համակարգի շահագործման հետ կապված որևէ պատասխանատվություն և վնասի հատուցման որևէ պարտավորություն չի կրում:
- 4.5 Բրոքերը հայտարարում է, որ, Համակարգին Հաճախորդի հասանելիությունը սույն համաձայնագրի համաձայն ապահովելով, որևէ պարտավորություն և դրանից բխող պատասխանատվություն չի ստանձնում Հաճախորդին Համակարգի շահագործման կանոնները, կարգը և առանձնահատկությունները բացատրելու համար և լիովին վստահում է սույն համաձայնագրի 4.1.-ից 4.4.-րդ կետերում նշված՝ Հաճախորդի հավաստիացումներին և հայտարարություններին:

5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 5.1 Համակարգը շահագործվում է Հաճախորդի բացառիկ հայեցողությամբ և պատասխանատվությամբ:
- 5.2 Հաճախորդին սույն համաձայնագիրը կնքելուց հետո Համակարգ մուտք գործելու համար -տրամադրված ծածկագրով ցանկացած մուտք Համակարգ և Համակարգով իրականացված ցանկացած գործողություն, անկախ մուտքը փաստացի իրականացրած անձի ինքնությունից, համարվում է Հաճախորդի մուտքը Համակարգ և Հաճախորդի կողմից իրականացրած գործողություն/կնքված գործարք, եթե մինչև այդպիսի մուտքը Հաճախորդը գրավոր չի տեղեկացրել Բրոքերին Պայմանագրում նշված կապի միջոցներով և Գործառնական օրերի ընթացքում, որ իրեն տրամադրված ծածկագիրը հայտնի է դարձել կամ կարող էր հայտնի դարձած լինել այլ անձանց՝ առանց Հաճախորդի թույլատվության, և չի պահանջել իրեն տրամադրել նոր ծածկագիր:
- 5.1.1. Նոր ծածկագիր պահանջելու դեպքում այն սույն համաձայնագրի 3.3. կետով սահմանված կարգով փոխանցվում է Հաճախորդին ստացման մասին ստորագրությամբ կամ էլեկտրոնային հաղորդագրությամբ պահանջը ներկայացնելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, եթե պահանջը ներկայացնելուց հետո 4 աշխատանքային օրվա ընթացքում Բրոքերը չի ստանում նոր ծածկագիր չստանալու մասին գրավոր բողոք, նոր ծածկագիրը համարվում է տրամադրված:
- 5.1.2. Համակարգին Հաճախորդի հասանելիությունը տրամադրվում է՝ հիմնվելով սույն համաձայնագրում վերջինիս կողմից տրված հավաստիացման վրա, առ այն, որ Հաճախորդը լիարժեքորեն տիրապետում է Համակարգին, գիտակցում և հասկանում է դրանով կատարվող բոլոր գործողությունների իրավական և տնտեսական հետևանքները:
- 5.1.3. Հաճախորդը սույնով հավաստում է, որ հասկանում է Համակարգի բոլոր ստեղծների և ընտրանքների վրա սեղմում իրականացնելու բոլոր իրավական և ֆինանսական հետևանքները և գիտակցում դրանց նշանակությունը:
- 5.1.4. Հաճախորդը հավաստում է և գիտակցում է, որ համակարգչին հասանելիության և համակարգչով գործողություններ կատարելու համար նախատեսված սարքավորումների և միջոցների (ստեղնաշար, մուկ, անջատման-միացման ստեղներ և այլն) շահագործմամբ, ինչպես նաև համակարգչի և դրա պարագաների էլեկտրական սնուցման միջոցներով կամ դրանց միջամտությամբ իրականացված ցանկացած գործողություն (ստեղնաշարի, մկնիկի, համակարգչի այլ ստեղծի ցանկացած սեղմում/քլիք և այլն), անկախ այդ գործողության գիտակցված թե չգիտակցված, նախատեսված թե պատահական բնույթից, կարող է հանգեցնել Արժեթղթերով գործարքների կատարման, դրանց պայմանների սահմանման և/կամ փոփոխման, Ծածկույթի, շուկայական տվյալներին և տեղեկատվական ծառայություններին Համակարգի միջոցով Հաճախորդին հասանելիության ակտիվացման, ապակտիվացման, դրանց ժամանակային ռեժիմի փոփոխման և այլ իրավական փաստերի՝ դրանցից բխող ֆինանսատնտեսական հետևանքներով՝ սույն համաձայնագրի և Արժեթղթերով գործարքների պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ ֆինանսական կորուստների, չնախատեսված ծախսերի, Հաճախորդի դրամական և Արժեթղթերով պարտավորությունների, ինչպես նաև Գործարքներով պարտավորությունների առաջացման: Սույն կետի համաձայն Համակարգով որևէ գործողություն իրականացնելու՝ սույն կետում նշված և ցանկացած այլ հետևանքների համար պատասխանատվություն է կրում բացառապես Հաճախորդը:
- 5.3 Բրոքերը իրավունք ունի ժամանակավորապես կամ անորոշ ժամկետով արգելափակել Հաճախորդի հասանելիությունը Համակարգին՝ այդ մասին հնարավորինս սեղմ ժամկետներում էլեկտրոնային նամակով ծանուցելով Հաճախորդին, եթե՝
- 5.3.1 Հիմնավոր կասկածներ ունի, որ Համակարգը շահագործվում է այն շահագործելու իրավասություն չունեցող անձի կողմից:

- 5.3.2 Հիմնավոր կասկածներ ունի, որ Համակարգով իրականացվում են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման միտված գործողություններ:
- 5.3.3 Անհրաժեշտություն է առաջացել իրականացնել Համակարգի տեխնիկական սպասարկումը՝ այն բարելավելու կամ անսարքությունները վերացնելու նպատակով:
- 5.4 Հաճախորդը գիտակցում, ընդունում և համաձայնվում է, որ հնարավոր են Համակարգի անկանխատեսելի ընդհատումներ Բրոքերից անկախ պատճառներով, մասնավորապես՝ Համակարգի ցանցային կապը ապահովող կապուղիների, սերվերների, կապող հանգույցների անսարքությունների, ինչպես նաև Համակարգին կապը մատակարարող անձանց կողմից այդպիսի անսարքությունները վերացնելուն ուղղված միջամտություն իրականացնելու հետևանքով, և որ նման ընդհատումների համար Բրոքերը պատասխանատվություն չի կրում:
- 5.5 Համակարգին Հաճախորդի հասանելիությունը արգելափակվում է սույն համաձայնագիրը կամ Պայմանագիրը լուծվելու դեպքում՝ լուծման օրվանից 3 օր առաջ, եթե կողմերը այլ բանի մասին չեն պայմանավորվում, ինչպես նաև Հաճախորդի գրավոր դիմումի հիման վրա:
- 5.6 Բրոքերի կողմից Կայքում Համակարգի օգտագործման ձեռնարկ կամ Համակարգի շահագործման ուղեցույցներ և ուսուցողական նյութերը և/կամ Համակարգի վերաբերյալ նմանատիպ այլ նյութեր հրապարակելը չի պարտավորեցնում Բրոքերին, կրում է բացառապես տեղեկատվական բնույթ և Հաճախորդը չի կարող որևէ պահանջ ներկայացնել Բրոքերին նրա կողմից տվյալ նյութերի հիման վրա գործողություններ ձեռնարկելու հետևանքների կապակցությամբ:
- 5.7 Հաճախորդը համաձայնվում է, որ Համակարգի միջոցով Հաճախորդին հասանելի բոլոր տեղեկությունները, շուկայական տվյալները (թե՛ իրական ժամանակում, թե՛ ուշացումով ընտրանքների դեպքում), այն է՝ Արժեթղթերի առքուվաճառքի գնանշումները, տնտեսական, քաղաքական և այլ ընդհանուր բնույթ կրող և մասնավոր անձանց վերաբերող բոլոր նորությունները կրում են բացառապես տեղեկատվական բնույթ, կարող են ժամանակային և պատահական շեղումներ տալ իրական ժամանակում, ինչպես նաև որևէ այլ պահի դրությամբ համապատասխան ԱՀ-ներում իրական տվյալներից և գնանշումներից, կարող են պարունակել այլ տեխնիկական և թվաբանական անճշտություններ: Հաճախորդը դրանք օգտագործում է բացառապես իր ռիսկով: Բրոքերը պատասխանատվություն չի կրում դրանց հիման վրա ընդունված՝ Հաճախորդի ներդրումային որոշումների և գործողությունների բացասական հետևանքների և կորուստների համար:
- 5.8 Համակարգին Հաճախորդի հասանելիությունը տրամադրվում է հիմնվելով սույն համաձայնագրում վերջինիս կողմից տրված հավաստիացման վրա, առ այն, որ Հաճախորդը լիարժեքորեն տիրապետում է Համակարգին, գիտակցում և հասկանում է դրանով կատարվող բոլոր գործողությունների իրավական և տնտեսական հետևանքները:

6 ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 6.1 Բրոքերը Համակարգի միջոցով ապահովում է Առքի և Վաճառքի Ոչ բավարար ծածկույթով գործարքների կնքման հնարավորությունը Հաճախորդի համար, եթե Հաճախորդը ապահովում է Նախնական մարժայի մեծության առկայությունը Հաճախորդի հաշվում:
- 6.2 Նախնական մարժայի մեծությունը արտահայտվում է որպես Ոչ բավարար ծածկույթով գործարքի գնի տոկոս, որը հասանելի և տեսանելի է Համակարգում յուրաքանչյուր Ոչ բավարար ծածկույթով գործարք կնքելիս:
- 6.3 Սահմանային մարժայի մեծությունը Հաճախորդի հաշվում չապահովվելու դեպքում Համակարգի կողմից իրականացվում է Դիրքերի փակում՝ Սահմանային մարժայի մեծության և Հաճախորդի հաշվում առկա գումարի տարբերությանը համամասնորեն:
- 6.4 Սահմանային մարժայի մեծությունը սահմանվում է Բրոքերի կողմից որպես Ոչ բավարար ծածկույթով գործարքի գնի տոկոս և հասանելի և տեսանելի է Համակարգում:
- 6.5 Նախնական և Սահմանային մարժայի մեծությունները կարող են փոխվել՝ առանց Հաճախորդին այդ մասին նախապես ծանուցելու, և Հաճախորդը սույնով հավաստում է, որ ինքը գիտակցում է դրանց՝ ժամանակի ցանկացած պահի հետևելու անհրաժեշտությունը, և որ ինքը չի կարող բողոք ներկայացնել, եթե նշված մեծությունների փոփոխման արդյունքում տեղի ունենա Դիրքերի փակում:
- 6.6 Բրոքերը չի ստանձնում նաև Սահմանային մարժայի մեծությունը չբավարարելու վերաբերյալ Հաճախորդին ծանուցելու պարտականություն, և Համակարգը առանց այդպիսի ծանուցման կարող է իրականացնել համապատասխան Դիրքերի փակում՝ ստացված միջոցները ուղղելով Սահմանային մարժայի մեծության բավարարմանը, ինչպես նաև Հաճախորդի դրամական և Արժեթղթերով պարտավորությունների մարմանը:

- 6.7 Սույնով Կողմերը պայմանավորվում են, որ Սահմանային Մարժայի մեծությունը հանդիսանում է Հաճախորդի դրամային պարտավորությունը կամ Հաճախորդի Արժեթղթերով պարտավորությունը՝ արտահայտված դրամային համարժեքով:
- 6.8 Սույնով Կողմերը պայմանավորվում են, որ մինչև Հաճախորդի կողմից Հաճախորդի դրամական և Արժեթղթերով պարտավորությունների լրիվ և ամբողջական մարումը Ոչ բավարար ծածկույթով գործարքի հետևանքով ստացված դրամական միջոցները և Արժեթղթերը կամ վերջիններիս իրացման արդյունքում ստացված դրամական միջոցները որպես Հաճախորդի պարտավորությունների ապահովման միջոց կարող են պահվել Բրոքերի կողմից (Միջոցների պահում)՝ Հաճախորդի դրամական և Արժեթղթերով բոլոր պարտավորությունների ընդհանուր գումարի սահմաններում: Այդպիսի պահումը ենթադրում է, որ Բրոքերը իրավունք ունի սառեցնել համապատասխան գումարի միջոցներ Հաճախորդի հաշվին և չկատարել դրան փոխանցման հանձնարարականները:
- 6.9 Առանց սահմանափակումների Համակարգի միջոցով Օրական Առևտուր իրականացնելը հնարավոր է, միայն եթե Հաճախորդի հաշվում ամեն Հակադարձ Գործարքը կնքելու պահին առկա են 25 000 ԱՄՆ դոլարին Շուկայական գնով համարժեք Միջոցներ: Եթե Հաճախորդի հաշվին տվյալ շաբաթվա որևէ օրվա դրությամբ առկա չէ սույն կետում սահմանված գումարը, Հաճախորդը կարող է Օրական Առևտուր իրականացնել այդ շաբաթվա ընթացքում միայն երեք անգամ, ընդ որում երեք Օրական Առևտուր իրականացնելուց հետո Համակարգը արգելում է տվյալ շաբաթվա ընթացքում Հակադարձ Գործարքից բացի որևէ այլ գործարքի իրականացման հնարավորությունը:
- 6.10 Սույնով Հաճախորդը ընդունում է և հասկանում, որ Համակարգի միջոցով Ոչ բավարար ծածկույթով գործարքների կնքումը հնարավոր է բացառապես այն դեպքում, եթե Հաճախորդի՝ Համակարգով գործառնություններ կատարելու համար նախատեսված Բրոքերային հաշվում կամ Արժեթղթերի հաշվում առկա է 2000 ԱՄՆ դոլարին հավասար գումար կամ դրան Շուկայական գնով համարժեք արժեթղթեր համապատասխանաբար:
- 6.11 Համակարգի միջոցով Ոչ բավարար ծածկույթով Վաճառքի գործարքների կնքումը հնարավոր է բացառապես որոշակի Արժեթղթերով, որոնց ցանկը հասանելի և տեսանելի է Համակարգում:

7 ՍԱԿԱԳՆԵՐ ԵՎ ՏՈՎՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ

- 7.1 Սույն համաձայնագրի համաձայն Համակարգի միջոցով գործարքներ կնքելու հանձնարարականները ի կատարում փոխանցելու, ինչպես նաև այդ հանձնարարականները ի կատարում վերափոխանցող և կատարող Գործակալներին նրանց կողմից սահմանված միջնորդավճարների փոխանցման ծառայություններ մատուցելու համար Հաճախորդը Բրոքերին վճարում է միջնորդավճարներ, որոնք սահմանվում են Պայմանագրի Հավելված 1-ով:
- 7.2 Համակարգի միջոցով ցանկացած գործարքի կնքում հնարավոր է բացառապես այն դեպքում, եթե Հաճախորդի հաշվին առկա են այդպիսի գործարքի կնքման արդյունքում առաջացող և Հաճախորդի՝ արդեն իսկ առկա դրամական և Արժեթղթերով պարտավորությունները կատարելու համար բավարար միջոցներ:
- 7.3 Համակարգի միջոցով Ոչ բավարար ծածկույթով Առքի գործարք կնքելու հնարավորություն տրամադրելու համար Հաճախորդը Բրոքերին վճարում է հատուցում՝ Ծածկույթի գումարի նկատմամբ տոկոսներով հաշվարկվող, որը հաշվարկվում է տվյալ գործարքի կնքման օրվանից մինչև Բրոքերային հաշվին Ծածկույթի և մուտքագրելու օրը:
- 7.4 Ծածկույթը դրամական միջոցների դեպքում ապահովվում է Համակարգի միջոցով չբավարարող դրամական միջոցների օգտագործման հնարավորություն տրամադրելու միջոցով, ընդ որում անկախ այն փաստից, որ Համակարգը շահագործվում է Բրոքերի կողմից՝ Բրոքերը ինքը սեփական միջոցներից Հաճախորդին փոխառություն չի տրամադրում, այլ դրա համար հասանելի է դարձնում Գործակալների միջոցները՝ Համակարգի միջոցով:
- 7.5 Ծածկույթը Արժեթղթերի (Ոչ բավարար ծածկույթով Վաճառքի գործարքների) դեպքում ապահովվում է որպես գործարքի առարկա Արժեթղթերի չբավարարող մասին Շուկայական գնով հավասար դրամական միջոցների օգտագործման հնարավորության տրամադրում՝ համապատասխան գնանշման արժույթով: Ընդ որում անկախ այն փաստից, որ Համակարգը շահագործվում է Բրոքերի կողմից՝ Բրոքերը ինքը սեփական միջոցներից Հաճախորդին փոխառություն չի տրամադրում, այլ դրա համար հասանելի է դարձնում Գործակալների միջոցները՝ Համակարգի միջոցով: 7.3. կետում նշված տոկոսային արտահայտությունը ունեցող հատուցման դրույթը այս դեպքում հաշվարկվում է համապատասխան ԱՀ-ում համապատասխան Ոչ բավարար ծածկույթով վաճառքի գործարքի առարկա Արժեթղթերի՝ յուրաքանչյուր Առևտրային նստաշրջանի փակման գնի հիման վրա՝ օրական կտրվածքով՝ տարին 365 օր հիմք ընդունելով:

- 7.6 Սույն համաձայնագրի 2.3 կետում նշված ծառայությունների համար Հաճախորդը Բրոքերին վճարում է Պայմանագրի Հավելված 1-ի համաձայն:
- 7.7 Ծածկույթի ապահովման դիմաց հատուցման դրույքը սահմանվում է Պայմանագրի Հավելված 1-ով:
- 7.8 Սույն Համաձայնագրով Բրոքերի նկատմամբ Հաճախորդի պարտավորությունները, այդ թվում՝ Հաճախորդի դրամական և Արժեթղթերով պարտավորությունները, ծագում են Հաճախորդի կողմից Համակարգի շահագործման համապատասխան գործողություն կատարելու պահից (համապատասխան ընտրանքի սեղմում), ընդ որում Գործարքի և Ծածկույթի տրամադրման դեպքում՝ համապատասխան Գործարքի և Ոչ բավարար ծածկույթով գործարքի փաստացի կնքման հետաձգված պայմանով: Որոշակի ԱՀ-ներում որոշակի Արժեթղթերի առքուվաճառքի հանձնարարականների առաքման փաստը ինքնին, առանց գործարքի փաստացի կնքման պայմանի, առաջացնում է Հաճախորդի պարտավորություն՝ համապատասխան հանձնարարականը փոխանցելու ընտրանքը Հաճախորդի կողմից իրականացնելու/սեղմելու պահից: Նման ԱՀ-ների և Արժեթղթերի ցանկը հատուկ նշվում է Բրոքերի կողմից Կայքում:
- 7.9 Հաճախորդը հասկանում է, որ ամեն դեպքում Ծածկույթի տրամադրումը կարող է մերժվել առանց որևէ պատճառաբանության, և որ Ծածկույթի տրամադրումը ամեն դեպքում Բրոքերի հայեցողությունն է՝ որպես Համակարգին հասանելիություն տրամադրողի:

8 ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ

- 8.1 Սույն համաձայնագրի համաձայն Համակարգը տրամադրվում է Հաճախորդին՝ բացառապես ի շահ իրեն օրինական միջոցների օգտագործմամբ Արժեթղթերով առևտուր իրականացնելու համար:
- 8.2 Համակարգի նկատմամբ Հաճախորդը սույն համաձայնագրի 8.1 կետով սահմանված իրավունքներից բացի ոչ մի իրավունք ձեռք չի բերում և պարտավորվում է հատուցել Բրոքերին Համակարգը 8.1 կետով սահմանվածից բացի այլ նպատակներով կամ միջոցներով օգտագործելու համար, այդ թվում՝ Համակարգին այլ անձանց հասանելիություն տրամադրելու, օրենքին հակասող նպատակներով կամ անօրինական ճանապարհով ստացված միջոցների օգտագործմամբ Արժեթղթերով առևտուր իրականացնելու համար:
- 8.3 Հաճախորդը պարտավորվում է հատուցել Բրոքերին պատճառված ցանկացած վնաս և կատարած ցանկացած ծախս, որը բխում է Բրոքերին ներկայացված՝ Հաճախորդի կողմից Համակարգի օգտագործման հետ կապված երրորդ անձանց պահանջներից, այդ թվում էթե այդպիսի պահանջները ներկայացվել են Բրոքերին (Բրոքերի հաշիվներից ասանկցեպտ բռնագանձվել է) Հաճախորդի Դիրքերի ավտոմատացված փակում իրականացնելու կամ այդպիսի փակումը այնպիսի ժամանակահատվածում իրականացնելու համար, երբ Հաճախորդի դրամային պարտավորությունը կամ Հաճախորդի պարտավորությունը արժեթղթերով գերզանցում են Նախնական մարժայի կամ Մահմանային մարժայի մեծությունները:
- 8.4 Կողմերի պատասխանատվության այլ հարցերը կարգավորվում են սույն համաձայնագրի այլ դրույթներով, Պայմանագրով և Պահառության պայմանագրով, իսկ դրանցով կարգավորված չլինելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ:
- 8.5 Բրոքերը պատասխանատվություն չի կրում սույն համաձայնագրի համաձայն Համակարգի կողմից Դիրքերի ավտոմատացված փակում իրականացնելու արդյունքում Հաճախորդին հասցրած վնասի համար:
- 8.6 Եթե Համակարգը Դիրքերի ավտոմատացված փակում չի կատարում, Հաճախորդը իր ողջ գույքով պատասխանատվություն է կրում դրա արդյունքում առաջացած իր պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:
- 8.7 Սույն համաձայնագրի համաձայն մատուցվող ծառայությունների որակի համար Բրոքերը երաշխիքներ չի տալիս և պարտավորություն չի ստանձնում ապահովել Համակարգի գործառնության շարունակականությունը և պատշաճությունը:
- 8.8 Յուրաքանչյուր պահի դրությամբ Հաճախորդը ընդունում է Համակարգի աշխատանքը ինչպես որ է սկզբունքով, այն է՝ Համակարգի ցանկացած հնարավոր խափանում և/կամ դանդաղում ցանկացած պատճառով (բացառությամբ Բրոքերի դիտավորյալ գործողությունների) ցանկացած պահի դրությամբ Հաճախորդը ընդունում է որպես Համակարգին բնորոշ հատկություն: Բրոքերը պատասխանատվություն չի կրում այդպիսի խափանումների և/կամ դանդաղումների համար: Այնուհանդերձ Բրոքերը կջանա, սակայն չի պարտավորվում, աջակցել Հաճախորդին նշված խափանումները կամ դրանց հետևանքները շտկելու գործում:

9 ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 9.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, սակայն ամեն դեպքում Հաճախորդի կողմից Պայմանագիրը և Պահառության պայմանագիրը կնքած լինելու պայմանով:

- 9.2 Եթե սույն համաձայնագիրը վաղաժամկետ չի լուծվում, ապա գործում է այնքան, որքան ուժի մեջ են մնում Պայմանագիրը և Պահառության պայմանագիրը միասին:
- 9.3 Սույն համաձայնագիրը կարող է, առանց Պայմանագրի և Պահառության պայմանագրի ուժի դադարեցման, վաղաժամկետ լուծվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ցանկացած պահի, ընդ որում Հաճախորդը պարտավոր է իր կողմից լուծման մտադրության մասին հայտնել սույն համաձայնագրի լուծման օրից 5 աշխատանքային օր առաջ: Սույն համաձայնագիրը Բրոքերի կողմից վաղաժամկետ լուծվելու դեպքում Բրոքերը իրավունք ունի իրականացնել Հաճախորդի Դիրքերի փակում: Սույն համաձայնագիրը Հաճախորդի նախաձեռնությամբ լուծվելու դեպքում Հաճախորդի Միջոցների տնօրինման հարցը լուծվում է համաձայն Պայմանագրի: Ամեն դեպքում, սակայն, սույն համաձայնագրի համաձայն Հաճախորդի ձեռքբերած արժեթղթերը փոխանցվում են Բրոքերի այլ անվանատիրոջ հաշիվներին շարունակվում են որպես ենթապահառուի մոտ հաշվառվել Բրոքերի մոտ, եթե Բրոքերը համապատասխան համաձայնություններ ունի կամ ձեռք է բերում համապատասխան Գործակալների հետ: Սույն համաձայնագիրը կարող է միակողմանիորեն փոփոխվել բացառապես Բրոքերի կողմից՝ այդ մասին Հաճախորդին ծանուցելու կամ Կայքում համապատասխան փոփոխություն տեղադրելու միջոցով: Փոփոխությունը ուժի մեջ է մտնում Հաճախորդի կողմից ծանուցումը ստանալու կամ Կայքում համապատասխան գրառումը փոփոխվելու 11-րդ օրը: Ծանուցումը պետք է պարունակի լրացման/փոփոխության տեքստը՝ ստորագրված Բրոքերի իրավասու անձի կողմից:
- 9.4 Հաճախորդը գիտակցում է, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ը հաստատելու մասին» թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ի (այսուհետ՝ Կանոնակարգ) համաձայն սահմանվել է լեվերիջի (սույն պայմանագրի համաձայն՝ Համակարգի միջոցով Ոչ բավարար ծածկույթով գործարքների հնարավորության տրամադրման համար Հաճախորդի կողմից ներդրված և անհրաժեշտ սակայն չներդրված միջոցների հարաբերակցությունը) չպետք է գերազանցի 1/300 ռեզիդենտ Հաճախորդների դեպքում և 1/400 ոչ ռեզիդենտ Հաճախորդների դեպքում: Հաճախորդը գիտակցում է, որ Բրոքերը չի կատարում Հաճախորդի պատվերները, այլ միայն փոխանցում է դրանք ի կատարում՝ Համակարգին հասանելիություն տրամադրելու գործիքի միջոցով, ուստի նաև չի տրամադրում լեվերիջ (Ծածկույթ) Հաճախորդին, այլ Համակարգի միջոցով թույլ է տալիս օգտվել այլ անձանց կողմից տրամադրվող լեվերիջից՝ Ոչ բավարար ծածկույթով գործարք կնքելու հնարավորությունից: Հաճախորդը պարտավորվում է Ոչ բավարար ծածկույթով ոչ ստանդարտացված գործարքներ (այդ թվում՝ արտարժույթի փոխարկման՝ ֆորեքս գործարքներ կնքելիս) գերծ մնալ վերոնշյալ 1/300 և 1/400 հարաբերակցությաունը (հայտարարում) գերազանցող Ոչ բավարար ծածկույթով գործարքներ կնքելուց:
- 9.5 Կանոնակարգով սահմանված Մարժայի փոխանցման կարգը սահմանված է սույն համաձայնագրով (կետեր՝ կետ 3.5), Պայմանագրով (բաժին՝ 5-րդ) և Պայմաններով (բաժին 7-րդ): Համաձայն Կանոնակարգի Մարժայի մեծությունը չի կարող պակաս լինել 5,000,000 ռեզիդենտի, իսկ 2,500,000 ոչ ռեզիդենտի համար: Բրոքերը իրավասու է Համակարգի միջոցով արգելափակել, որևէ գործարքի Կնքումը, որը Հաճախորդի կողմից կնքվել է ի խախտումն սույն պայմանի:
- 9.6 Այն աղբյուրները և փաստաթղթերը, որոնց սույն համաձայնագրում հղում է արվում՝ որպես սույն համաձայնագրով որոշվող պայման պարունակող, հանդիսանում են սույն համաձայնագրի բաղկացուցիչ մասերը պայմանով որ օբյեկտիվորեն հնարավոր է հավաստիանալ ցանկացած պահի դրությամբ դրանց բովանդակության մեջ: Սույն կետում նշված փաստաթղթերի և աղբյուրների (ներառյալ Պայմանագիրը և Պահառության պայմանագիրը) և սույն համաձայնագրի դրույթների միջև հակասության դեպքում գերակայում են սույն համաձայնագրի դրույթները:
- 9.7 Սույն համաձայնագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը, իսկ սույն համաձայնագրից բխող վեճերը ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 9.8 Սույն համաձայնագիրը կազմված է երկու հավասարազոր բնօրինակներից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր կողմին:

ԲՐՈՔԵՐ	ՀԱՃԱԽՈՐԴ
«Ամերիբանկ» ՓԲԸ ք. Երևան, 0015, Վ. Սարգսյան 2	

<hr/> <p>Ստորագրություն (Կ.Տ.)</p>	
------------------------------------	--